

ՄԵԿՆՈՂԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ՓԻԼՈՆ ԱԼԵՔՍԱՆԴՐԱՑՈՒ ԵՐԿԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Օ. Ս. ՎԱՐԿԱԶԱՐՅԱՆ

Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունները դարեր շարունակ ուսումնասիրման առարկա են եղել հայ միջնադարյան վարդապետարաններում: Նրան ծանոթ լինելու ամհրաժեշտությունը մեկնիչներից մեկը՝ Դավիթ Քոբայրեցին, բացատրում է հետևյալ կերպ. Փիլոնը «... գամենայն մի ըստ միոջէ այլաբանական իմաստիք աւարտէ և գլխաւորէ յառակ առաքինաւոր հանճարոյ, յորոց ուսանելով որ խոհեմաբար, դիրաւ զայ ի մեկնութիւն Աստուածեղէն կտակաց, վասն զի կրթարան են մատենանք սորա յստակամիտ ընթերցողաց, եւ դիրանդանակեի ի ճշմարիտս մեր ուսումն, որ ի Քրիստոս Յիսուս ի Տէր մեր աւարտի...» (ընդգծումը մերն է - Օ.Վ.): Եվ իրոք, մեկնողական նպատակներով փիլոնյան երկերի գործածման մասին են վկայում դրանցից կատարված քաղվածքները Սուրբ Գրքի հայ մեկնիչների, օրինակ՝ Եղիշեի՝ և Վարդան Արևելցու՝ մեկնություններում:

Սակայն մեկնողական ձեռնարկի դեր կատարելուց առաջ այդ երկերը, որոնք դասվում էին «նուրբ եւ դուրաւոր»՝ գրքերի շարքը, իրենք բացատրության (շատ հաճախ պարզապես լեզվական առումով) կարիք էին ունենում: Չեռագրերում պահպանված նյութը ցույց է տալիս, որ այն տրվում էր դասախոսության ձևով՝ և ընթանում էր երկու փուլով:

Սկզբից «վերլուծողը» տեղեկություններ էր հաղորդում հեղինակի կենսագրության, գործունեության և թողած մատենագրական ժառանգության մասին, այնուհետև հայտնում էր, թե երկերը որ հերթականությամբ պետք է ընթերցվեն, ինչպիսին են եղել դրանց ստեղծման հանգամանքներն ու դրդապատճառները, և ինչ արժանիքներ կան ինչպիսի կարևորություն ունի այս կամ այն աշխատությունը ուսումնական տեսակետից: Չեռագրերում այս փուլն արտացոլված է «պատճառ» կամ «սկիզբ և պատճառ» կամ «նախադրութիւն» կոչվող դրվագներում, որոնց կապը հաջորդ փուլի՝ «լուծմունքի» հետ հաստատվում է այն բանով, որ մի կողմից համառոտ նախաբան-նախադրությունները տեղեկություններ են տալիս հենց տվյալ երկին նվիրված լուծմունքի սկզբում և այլ տեղ չեն հանդիպում, մյուս կողմից էլ հատուկ ժողովածուներում գետեղված ընդարձակ պատճառները երբեմն ավարտվում են ընթերցվող երկի սկզբնական բառերով, այսինքն՝ *լուծմունքի* առաջին տեղիով: Այսպես, «Փիլոնի Յաղագս նախախնամութեան բան առաջին առ Աղեքսանդրոս» Գոչին ասացնալ պատճառ»-ը ավարտվում է հետևյալ բառերով. «Այս եւ որ սոցին նման է պատճառ առաջիկայ գրոցս, որպէս ասէ. *Յորժամ նախախնամութեան բան...*»: Ընդգծված բառերը Փիլոնի «Յաղագս նախախնամութեան» գրքի սկիզբն է. արտասանելով «պատճառ»-նախաբանը՝ ուսուցիչն իսկույն անցնում է ընթերցմանը: «Պատճառի» և «լուծմունքի» միևնույն մեկնողական ընթացքին պատկանելու մասին լավագույնս վկայում է հավանաբար Վանական վարդապետի դպրոցում ստեղծված «Առաջաբանութիւն Փիլոնի» մեկնության կառուցվածքը. ընդհանուր նախաբանից հետո հայերեն բարգձմանված փիլոնյան յուրաքանչյուր երկն օժտվում է համառոտ ներածությամբ և դրան անմիջապես հաջորդող լուծմունքով: Քանի որ «պատճառը» կամ «նախա-

¹ Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարան (այսուհետև՝ ՄՄ), ձեռ. 1879, ք. 157ա:

² Տե՛ս Լ. Խաչիկյան, Մեկնութիւն Արարածոց, Երևան, 1993, էջ 124-136:

³ Տե՛ս Փ. Անթրապյան, Վարդան Արևելցի. Կյանքն ու գործունեությունը, գիրք Ա, Երևան, 1987, էջ 289-90:

⁴ Տե՛ս Ա. Արքախանյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, Երևան, 1956, էջ 121:

⁵ «Այսպէս լուրս ի հոգեւոր վարժապետաց ի կենդանի նոցա ձայնիցն», «Այսպէս լուրս ի գրոց եւ յուսուցչաց մերոց», - գրում է Դավիթ Քոբայրեցին պատճառների մասին (տե՛ս Կ. Մուրադյան, Նազիանզացին հայ մատենագրության մեջ, Երևան, 1983, էջ 185):

⁶ ՄՄ ձեռ. 1879, ք. 158բ:

դրությունը» լուծմունքի անբաժանելի մասն էր, «լուծմունք» եւ «պատճառ» անվանումները ձեռագրերում երբեմն շփոթում էին՝ նախադրություն ունեցող լուծմունքը կարող էր «պատճառ» կոչվել⁷: Բնականաբար այս նույն տրամաբանությամբ վերոհիշյալ մեկնությունը ներածական մասեր ունենալու պատճառով կոչվել էր «Առաջաբանութիւն»:⁸

Ուսումնական ընթերցանության երկրորդ փուլի՝ «լուծմունքի» կմայքն են կազմում մեկնվող երկի առանձին բառեր կամ կարճ հատվածներ, որոնք դասավորվում են լուծմունքում ըստ մեկնվող բնագրի ընթացքի, և կամ իրենք են բացատրության առարկա դառնում, կամ էլ ցույց են տալիս երկու տեղիների միջև ընկած ավելի ծավալուն մեկնվող, իսկ իրականում պարզապես վերապատմվող հատվածի սահմանները: Մեկնվող միավորը ձեռագրերում նշվում է հատուկ նշաններով՝ լուսանցքում կամ հենց մեկնության բնագրում, կամ էլ սկսվում է «բ[ա]ն» բառի հապավումով: Մեկնողական մասն անջատվում է մեկնվողից կամ կետով, կամ էլ «լ[ու]ծ[ումն]» բառով:

Ինչպես պնդում է Մ. - Է. Շիրինյանը վերջերս լույս տեսած իր հոդվածում⁹, «լուծմունք» եզրը ունի լսույ՝ հունական համարժեք: Դա ճիշտ է միայն «լուծումն» բառի ստուգաբանության համար: Ըստ վերը նկարագրած առանձնահատկությունների, որպես *ժանրային ձև*՝ «լուծմունքը» հավասար է միայն *σχόλια*-ներին. մյուս կողմից *լսույ՝ ժանր* առհասարակ գոյություն չի ունեցել. կար *ζητήματα και λύσεις* (խնդիրներ և լուծումներ): Փիլոնին նվիրված պատճառներից մեկում¹⁰ կարելի է դիտել, թե ինչպես մեկնիչը փորձում է համատեղել «լուծումն» և «լուծմունք» բառերի իմաստները. «Իսկ լուծումն *հանգիստ* ասի. այն է, որ մեկնելով զբանն, հանգուցանէ զմիտս հարցողին եւ լսողին, քանզի *ընդէ ր* ասել՝ տարակուսական է» փորձում է նա բացատրել Փիլոնի երկի՝ «Այնոցիկ որ ի Լինելութենէն՝ խնդրոց եւ լուծմանց» անվանումը: Այս բացատրությունը պարունակում է երկու քողարկված մեջբերում՝ առաջինը Թեոնի «Ճարտասանական նախակրթություններից» մի հատված է, որը սկզբնազգրում նվիրված է ճառի ջուն առարկայից շեղումների թուլատրելիությանը («Քանզի ոչ վայրապար արժան է խորշել եւ հրաժարել, որպէս Փիլիստոս, զի *հանգուցանէ զմիտս լսողացն...*»)¹¹, և երկրորդը՝ Դիոնիսիոս Թրակացու հունարենի հարցական մասնիկների մասին դրվագը. «*Եւ տարակուսական թքն որք տարակուսեալք յերկրայս սովորեացաք բաղկապել. եւ են այտրիկ՝ իսկ ընդէ ր...*»¹²: Այս բացատրություններից և ոչ մեկը իրականում չի վերաբերում որևէ «լուծման» և չի պարզաբանում, թե ինչու է այն կոչվում նաև «հանգիստ»: «Լուծումն» բառին «հանգստանալու, մի պահ կանգնելու, դադարելու» իմաստը վերագրելու համար մեկնիչը պետք է ծանոթ լիներ հունարեն *σχολή* բառի սկզբնական նշանակությանը՝ «դադար, ազատ ժամանակ, *հանգիստ*»: Մասնագիտական լեզու, սակայն, ճանաչում է դրա փառաբանական «*σχόλιον*» ձևը՝ «ուսումնական գրառում» իմաստով¹³. մեկնության այս վերջին տեսակը, ինչպես կարելի է եզրակացնել, ավելի լավ ծանոթ է եղել պատճառի հեղինակին, քան «խնդիրք եւ լուծմունքը»¹⁴:

⁷ Այդպիսի «շփոթում» նկարագրում է Կ.Մուրադյանը («Նազիանզացիից հայ մատենագրության մեջ», էջ 170, 174). Ինտագրատոր ցույց է տալիս, որ Եղիա Ասորու «պատճառ» կոչվող մեկնությունը իրականում լուծմունք է: Դա, իրոք, այդպես է, սակայն դժվար չէ նկատել, որ տվյալ լուծմունքի սկիզբը ներածական բնույթ է կրում, և այս համագամայն ամենայն հավանությամբ արտացոլվում է լուծմունքի խորագրում՝ «Եղիայի ասացեալ Ասորոց վարդապետի պատճառ վերալուծութեան ի խաւսս սրբոյն Գրիգոր Աստուծաբարհի» (ՄՄ ձեռ. 5254, ք. 145բ): Նույն երևույթը կարելի է դիտել և «Պատճառ Սահմանաց գրոց» կոչվող լուծմունքում (տես Հ. Ղ. Միրզաբեյ, Արդոյ՞ք ամրոցական աշխատություն է «Պատճառ Սահմանաց գրոց»-ը, «Բանբեր Երևանի Համալսարանի», 2000, N 1(100), էջ 73-91):

⁸ Լուծմունքների և պատճառների կապված լինելու փաստից կարելի է եզրակացնել, որ պատճառների խորագրերում հիշատակված վարդապետները պետք է որ համապատասխան հեղինակներին նվիրված վերլուծական դասընթացներ վարած լինեին: Սակայն դրանից ամենևին չի բխում, որ ժողովածուներում պահպանված պատճառներն առանձնացվել են *պատկանված* լուծմունքներից և այդպես փորձել լուծել վերջինների հեղինակության խնդիրը:

⁹ Տես «Մեկնողական ժանրի կազմավորումը և զարգացումը Հայաստանում», «Աշտանակ. Հայագիտական պարբերագիրք». Կ. Գ. Երևան, «Նաիրի», 2000, էջ 50: Ի դեպ, մեկնողական «*ծանրք*»-ը գոյություն չունի. կա մեկնողական *զանկանություն* (այսինքն՝ գրականության տեսակ. ինչպես կա, օրինակ, գիտական գրականություն), որի մեջ արդեն կարելի է տարբերել առանձին ժանրային ձևեր:

¹⁰ ՄՄ ձեռ. 5254, ք. 121ա:

¹¹ Այսպես ձևազարում տես ՄՄ ձեռ. 5254, ք. 120բ:

¹² Թեովնեայ Յաղագս ճարտասանական կրթության, աշխ. Հ. Մանադյանի, Երևան, 1938, էջ 74-75:

¹³ Н. Адонц, Дионисий Фракийский и армянские толкователи, П., 1915, էջ 36:

¹⁴ Թեոնի հայերեն թարգմանության մեջ *σχολή* բառին համապատասխանում է «պարապ»-ը (անդ, էջ 72-3), մեր մեկնիչի «հանգիստ»-ը ոչ թե փոխառություն է հունարեն աղբյուրից, այլ ինքնուրույն ձևի թարգմանություն:

¹⁵ Ի դեպ, «Առաջաբանութիւն Փիլոնի» լուծմունքը ձեւավորված է «Հարցումն եւ պատասխանի»-ի ձևով, սակայն «ժարք» նշում ունեցող տեղիները մեծ մասամբ ոչ թե իսկական հարցեր են, այլ հասարակ բնագրային հատվածներ:

Նկատելի է, որ մինևույն աշխատությանը նվիրված լուծմունքները բավականին տարբերվում են բացատրությունների հանգամանալիությամբ: Մեկնիչը կարող է հակիրճ ուրվագծել մեկնվող հատվածի ընդհանուր իմաստը՝ չհոգալով առանձին խորքին տեղիների, հատկապես հունաբանությունների մասին, կամ էլ քիչ թե շատ մանրամասն վերապատմել ավելի մատչելի լեզվով¹⁶, ընդարձակել շարադրությունը տարբեր լրացուցիչ տեղեկություններով՝ բնագրում հիշատակվող պատմական անձնավորության կամ իրադարձության վերաբերյալ, բերել աստվածաշնչյան գուգահեռ տեղից կամ ժամանակակից իրերի հետ համեմատություն կամ էլ բառարանային նյութ¹⁷: Կարելի է նաև նկատել, որ մինևույն երկի վերլուծողները երբեմն կրկնում են միմյանց բացատրությունները: Այսպես, օրինակ, ստորև բերված Փիլոնի «Յաղագս նախախնամութեան» մեկ հատվածին վերաբերող պահպանված լուծմունքներից¹⁸ քաղվածներում «բարել» բառը թարգմանվում է «բամբասել» A1, A2 և «Առաջաբանութեան» մեջ, իսկ «ի ճահ» բառը որպես «ի դէպ»՝ նույն A1 և A2 լուծմունքներում: Ստորև բերվող աղյուսակը տեսանելի է դարձնում փիլոնյան մինևույն բնագրին վերաբերող տարբեր լուծմունքների փոխհարաբերությունները.

<p>Յորժամ գյաղագս նախախնամութեան քանդ կամէի քննութեամբ հարցանել, եւ անցնել գիպէի գյաղագս իւրաքանչիւր ուրուք այնոցիկ՝ որ ի բնութեան եզելալ կատարեցան՝ իրացն օրինակ, զի ճահ իմաստնոց զսելիս գիտացի քարտել, եւ հարցանել յաղագս առա. զի թէպէտ եւ յոյժ դժուարախասանելի, եւ դժուարատեսանելի իցէ հարցուածս¹⁹:</p>		
<p>Առաջաբանութիւն Փիլոնի (ՄՄ ձեռ. 437, 598, 1919, 1873) Յորժամ յառագս. դա ստացի արկէր եւ ես քննեցի . զսելիս զնտացի . ստագեւոր սանձ լսել, գոր շնձ գտացել [զնաստոնց] քանս քամբասնձ:</p>	<p>A3 (ՄՄ ձեռ. 1672) Յորժամ գյաղագս . Աստ թէ դա ստացի արկէր եւ եւ ստանձին լինելով քննէի, գիտու, գիտացի գրան . զսելիս արտաքնոցն արեանարեւալ, զի ոչ լուսալ[ը] զճշարկոտ:</p>	<p>A2 (ՄՄ ձեռ. 437, 1053, 1480, 2059, 2379)²⁰ Յորժամ գյաղագս նախախնամութեան քանդ [ամբի ինամ]: այս է. զի քաղոցն ի ներսնոցոց [ճ] ոչ խտտովանէ ինձ նախախնամութիւն զոչ. եւ քաղոսն հասնեցողանէ ինձ եւ ամակցն եւ անհատացած ստինձ գաշխարսն [արք], զի ԳՊ ժողոնեցին ժողով կառի յաղագս Յախախնամութեան: Յորժամ, ստէ, քննէ եւ հարցոսն ի ընդ միտ յաղագս նախախնամութեան եւ ստեղծ քննութեանց ղիպէի ի ստեղծելիք արարածուց: եւ տեսանէ զի նախախնամութեան կողմն օրինակել իրաքանչիւր բնութեան եզելալ լրացալ էլ ինձ յիշելի, յիշելի, ի ծովու, ի ծովոր, եւ յամսնոց: զի նախախնամացող վոյճի յաղագսն ինձ օմոցը եւ վերս օմոցը. եւ Երեմի շքեղալարեանն յուստարաց ընթացք, երկրի նախատրոյթին եւ այլն ոչ եւ ամ[ձ] նախախնամացող ոչ մի՞նչ եւ յոյճն եւ յոյճն մասուն ճեւաց տեսանմն, զի կողմն զնքնուոցն եւ ինձուց ունիք. յորժամ դիպակ [քննութեանց] արեւ եւ տեղի յայժամ ի ի ճահ, [այս է ի դէպ] զկողոցի քարտել: զնտոնոց [նեքնութեանց] լսելիս . որք ստեւ եւ լսեմ զոչ նախախնամութիւն [քննութեան], այս ինքն ի դէպ զկողոցի քարտալ եւ հարցանել յաղագս աղագս. այս է ընդ միտ քննել եւ հարցանել:</p>
<p>A1 (ՄՄ ձեռ. 59, 437, 2595) Յորժամ յառագս. դա ստացի արկէր եւ ես քննեցի իմաստութեանք, եւ գտի զամենայն ինչ որ բնութեանք [եղին], եւ ի սանձանի եւ ի մերթոյ նախախնամութեան [Ստատոն լե]: զի ճահ [ինձ] իմաստնոց զսելիս զնտացի քարտել . ի դէպ եւ պատեհատը զսելիս նոցա [ստէ] գիտացի քամբասել, զի անկատար ըն լսել եւ տեսնել զնաստոնցն. կան թէ ստագեւոր են. յնձ զնտացել զնաստոնցն քանքն, վասն այն քամբասնձ զնախախնամութիւնն:</p>		

¹⁶ Σχόλιον մեկնողական ձևի վերապատմողական բնույթի մասին տես՝ Փ. Բլաս, Γερμηνευτικα υ κριτικα, Ολόσσα, 1891, էջ 180:

¹⁷ Առանձին բառերի, ոչ անպայման հունաբանությունների բացատրություն: Հետագայում լուծմունքներից քաղած բացատրությունները հավաքում էին առանձին բառգրքերում: Հայ փիլոնականի լուծմունքները արքայու են ծառայել «Բարք Փիլոնի», «Բարք խորանի» և «Երթներդրդ գլուխ գտը» քառադասների համար: Վերջին բառգրքի լուծմունքների հետ ունեցած առնչության մասին տես՝ Հ.Անտրյան, Միջնադարյան Հայաստանի քառադասագրական հուշարձաններ (V-XVդդ), Երևան, 1966, էջ 92-96: Լույնատիվ հարաբերություններ մենք նկատում ենք «Առաջաբանութիւն Փիլոնի» լուծմունքի և «Բարք Փիլոնի/Բարք խորանի» բառգրքերի խմբի միջև:

¹⁸ Շարադրությունը շժմարբերունելու համար մենք չենք բերում Փիլոնի բոլոր երկերին վերաբերող լուծմունքների նկարագրությունը և դասակարգումը. այն հրապարակվելու է առանձին հոդվածում: «Յաղագս նախախնամութեան» երկի լուծմունքները նշվում են A տառով, ստացի հետո դրվող ցուցիչներ նշանակում են տարբեր հեղինակների կողմից գրված լուծմունքներ: «Առաջաբանութիւն Փիլոնի» պարունակում է փիլոնյան՝ հայերեն թարգմանված բոլոր աշխատությունների մեկնությունները, ուստի «Յաղագս նախախնամութեան»-ը վերաբերող հատվածն առանձին գործ չէ և չի ստանում որևէ առանձին նշում: ՄՄ թիվ 437 ձեռագրում գտնվելով են և «Առաջաբանութիւն»-ը, և A1, A2 լուծմունքները, մնացած մասնախմբերում՝ լուծմունքների միայն մեկ տեսակը:

¹⁹ **Փիլոնի Երբայնցալ** Բանք երեք չեւ ի լոյս ընծայեալք աշխատասիրութեամբ Հ. Մկրտիչ վրդ. Ազերեանց, Վեներսիկ, 1822, էջ 1: Լուծմունքների բնագրերում անկուտակվող փակագծերում բերվող հատվածները թվարկված ձեռագրերի մեջ նկատած տարբերություններն են:

²⁰ A2 խմբին պատկանող որոշ ձեռագրերի ընթերցվածքները թույլ են տալիս ենթադրելու, որ վերլուծողի տրամադրության տակ է եղել «Յաղագս նախախնամութեան» երկի ընթերցանություն, որը երբեմն սարքերվում էր Մկրտիչ Ավետիսյանի բնագրից: Այսպես, լուծմունքից երևում է, որ Փիլոնի բնագրում մեկնիչը կարդացել է ոչ թե «դեղալ օրինակ», այլ «դեղալք օրինակը»:

Պարզ է, որ լսարանում գրի առած մեկնություններն օգտագործվում, լրացվում և վերամշակվում էին²¹ հետագա ուսումնասիրողների կողմից, և այսպես պահպանվում էր դպրոցի ուսումնական ժառանգորդությունը: Մեկնողական ավանդությունը, սակայն, ունեցել է և երկրորդ (ըստ հաջորդականության և կարեւորության փաստորեն առաջին)՝ *բանավոր* կողմ:

Հովհաննես Սարկավազի կենսագրության մեջ «վարդապետական վերլուծութեան»²² ընթացքը նկարագրվում է հետևյալ կերպ²³.

«Շուրջ բակ բոլորեալ զմանկունս զհորեա՛ խոնարհաբար եւ ախորժելի սիրով ուսուցանէր զխրթին եւ զխորին իրս: Նախ՝ զքերականութիւն, զբանայի գիտութեան եւ զդաստիարակն վերծանութեան, եւ զաղբերն տասնեակ առոգանութեանց, յորմէ եւ որով տրոհին միտք եւ ճանաչին ոյքք քաջացն²⁴, եւ հեշտանան լսելիք ունկնդրացն, տեղեկանան երկայնագունիցն եւ տիցն սիդորայից²⁵, երկամանակացն²⁶ եւ անձայնիցն²⁷, եւ տրամախոհ անկեցելոյ նշանին, ըստ վերսաստութեան շեշտի եւ ըստ պարբեկութեան պարուկի²⁸ եւ յարառոցելոյ²⁹ ապաթարցի³⁰, զի մի ծիծաղելի չար խոհակերի նմանեալ³¹, զտուն առ միջակ եւ զվստորատ առ³²՝ աւարտ եղեալ ի կատարեալ մտաց, տարորոշ զբանն առնիցեն:

Որոյ եւ զկնի կրթէր, արկանէր ի զիրս նուրբս եւ դժուարալուրս, եւ ըստ առոգանութեանց խրատու ի վար արկեալ պատրաստաբար խուզելով զմիտս, եւ զբա<յ> եւ զբառս, առելով համարս ըստուգի պահանջէր»:

Վկայության առաջին պարբերությունը հազեցած է հունաբանություններով, որոնց

²¹ Ուսումնասիրվող նյութի մեջ մեզ չհաջողվեց գտնել ուսուցիչների կողմից գրառումները սրբագրելու և խմբագրելու մասին որևէ հիշատակում, թեև այդպիսի ընթացքը շատ բնական կլիներ: Սակայն վկայություն հայտնաբերվեց լուծույթների հետագա «սպառողների» կողմից կատարված լրացումների և խմբագրումների մասին. այսպես, ՄՄ թիվ 1053 ձեռագրում պահպանված A2 լուծույթի բնագրում հին վերլուծող խոստովանությունից հետո («Պիթագորաս ասէ զթիս՝ զթիս այս չն՛ ի գիտելոյ») հետագա ընթերցողը լրացնում է. «Բայց եւ, Յոհան, զրիչս և ստացողս զուցս զայս կարծեն զթիս Պիթագորաս, զոր ասանդեաց աշակերտաց իւրոց, եթէ զմինն յորժան կրկնես, լինի երկու, եւ աշխարհս զայս երկուց տեղծեալ է՝ միւրոյ իս արուեստից, եւ երկեակն ասեն լինի չորս, որովք ասէին, թէ այս չորից եղեալ է աշխարհս» (թ. 250ա, լուծույթի այլ օրինակներում ընդմիջարկությունը բացակայում է): Ընդմիջարկության բովանդակությունից պարզ երևում է, որ այս Յոհանը լուծույթի հեղինակը չէ, այլ ընդօրինակող և խմբագրող (հմնտ. **Գ.Գրիգորյան**, Փիլոն Ալեքսանդրացու աշխատությունների հայ մեկնությունները, «Բանբեր Մատենադարանի», հատ. 5, 1960, էջ 104):

²² Ա. Արթուրյան, Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը, էջ 120:

²³ Անդ, էջ 121. Վերոբերյալ վկայության մեջ հանդիպում է նաև ամենավաղ հիշատակում Փիլոնի աշխատությունների ընթերցման մասին, թեև պարզվում է, որ Մարկավազի հետաքրքրությունը տվյալ դեպքում նեղ մասնագիտական բնույթ էր կրում. քերականական-ճարտասանական դասընթացներից հետո նա անցնում էր տոմարագիտությանը, այնուհետև մատուցում էր ունկնդիրներին «... գառակախաս բանս Արիստոտելի, եւ զթուականայի խորոցս Փիլոնի՝ դարից եւ կոճատաց՝ եւ զտի ի օնցանէ ծնունդս, եւ ի ներքոյ տասնեկն զծնունդս եւթանց, եւ զանկարութիւն ի յատուկս ստուգակարգս, յաճունս եւ յանճանականս:» Փիլոնի երկերի թվարանական հատվածների («խորոց»-ների) մեկնաբանության արդյունքները ամփոփված են Մարկավազի «Յաղագս անկիւնադր թոցս» եւ «Վասն քուից» աղյուսակներում (դրա մասին տես անդ, էջ 148-154, 155-157, նաև **Գ. Պետրոսյան**, Մաթեմատիկան Հայաստանում հին և միջին դարերում, Երևան, 1959, էջ 150-155):

²⁴ Հիշատակարանի հունաբանությունների վերլուծությունը բերում ենք ծանոթագրությունների ձևով: Տվյալ տեղի համար տես **Н. АДОНИЦ**, Дионисий Фракийский..., էջ 3. հիշատակագիրը միաձուլում է Դիոնիսիոսի հայերեն բնագրի նախադասության երկու արտահայտություն՝ τὰς τῶν ποιητῶν ἀρετὰς («գրքորդացն արիտիփնս»), այսինքն՝ «Ժողիցանկերի առաքիճություններ», փոխարինելով «առաքիճություն»-ը «քաջ» բառով) եւ καὶ ἕξις (ոյնք) τῶν ἀναγιγνωσκόντων («և ընթերցողների ունակությունները»):

²⁵ Անդ, էջ 9-10.

²⁶ Անդ, էջ 5 Ճիչրոսս

²⁷ Անդ, էջ 7 Ճփոսս

²⁸ Անդ, էջ 3 Τόνος ἐστίν ἀπήχησις φωνῆς ἐναρμονίου, ἣ κατὰ ἀνάστασιν ἐν τῇ ὀξείᾳ (թ ըստ վերսաստութեան շեշտին), ἣ κατὰ ὀμαλισμὸν ἐν τῇ βαρείᾳ, ἣ κατὰ περιέλασιν ἐν τῇ περισπωμένῃ (թ ըստ պարբեկութեան պարուկան):

²⁹ Անդ, էջ 15, 36, 37 παραλαμβάνω

³⁰ Անդ, էջ 38, 41 ἀπόστροφος

³¹ Արտահայտությունը փոխառված է Դավիթ Զեղրակահից. «Իսկ ոչ ուղեղ տրոհել ըստ արինակի չար խոհակերի զամբանսն ոչ ուղիղ բարձմեյ, որ է զմիտս ի մտաց եւ զբան ի բանէ գառուցանել, զի մի պարուսակեալս ի նմա միտք յայտնեցան, եւ ի լտղէն զանխլացոյց եւ ինքն անարուեստ ցուցաւ:» (**Գ. Տառնկյան**, Դավիթ քերականական աշխատության նորահայտ ամբողջական ձեռագիր տեքստը, «Բանբեր Մատենադարանի», հատ. 3, 1956, էջ 248)

³² Սրբագրումը մերն է՝ բնագրում կարդացվում է «զըլտրատառ»: «Ստորառտ» եզրը ἵποδιαστολή բառի բարբաճանությունն է (տես **Н. АДОНИЦ**, էջ 42):

աղբյուրը, բարեբախտաբար, հեռու փնտրելու կարիք չկա, քանի որ քերականական դասընթացների մասին պատմելիս հիշատակագիրն օգտվում է հենց Դիոնիսիոս Թրակացու «Քերականական արվեստի» բառապաշարից: Ոճի արտատոնությունն, իհարկե, ինչ-որ չափով դժվարացնում է դրվագի մեկնաբանումը. անհասկանալի է մնում՝ իրականում ինչ էր անում վարդապետը քերականություն ուսուցանելու համար. արդյոք միայն սերտել էր տալիս Դիոնիսիոսի «Քերականական արուեստ»-ը: Պարզ է միայն, որ քերականական վարժությունների նպատակներից գլխավորն է եղել բնագրերի ճիշտ վերծանումը՝ առողանական երանգների և տրոհումների պահպանությամբ¹¹. Վերծանումը կատարվում էր լսարանի ներկայությամբ, ուստի վերծանողը պետք է հոգ տաներ, որպեսզի «հեշտանան լսելիք ունկնդրացն»: Այս հմտությունը ձեռք բերելուց հետո միայն անցնում էին հեղինակների ուսումնական ընթերցմանը և հեղինակային խոսքի որակի, «ժայի եւ բառի» վերլուծությանը:

Մյուս կողմից, վերծանությունը և ունկնդրությունը ոչ միայն քերականական, այլև ճարտասանական վարժանքի ձևերից էին. Թեոն Ալեքսանդրացու «Յաղագս ճարտասանական կրթութեան» աշխատության մեջ նույնիսկ առանձին գլուխներ են նվիրված «Յաղագս վերծանութեան եւ վերծանման» և «Յաղագս լսելութեան»¹², որոնց մեջ գետեղված հրահանգները որոշ չափով բացատրում են վերլուծական ընթերցումների, հետևաբար, ինչպես կտեսնենք, և մեզ հասած լուծումների կառուցվածքը:

«Յաղագս վերծանութեան և վերծանման» հոդվածում Թեոնը խորհուրդ է տալիս պատմել ուսումնասիրվող երկից ընտրած հատվածները, աշխատելով մաս առ մաս հիշել դրանց բովանդակությունը և բովանդակությանը պատշաճ դերասանական երանգները¹³. «Արդ՝ ամենեցուն օգտակարագոյն եղիցի զգեղեցիկսն յամենայն շարագրածէ ընտրելով

¹¹ Որոշ հիմքեր կան ենթադրելու, որ առաջին վերծանությունների նյութը Աստվածաշունչն էր և ծիսական գրքերը, որոնցում կար «արհեստ առողանութեան», այսինքն՝ երաժշտական-առողանական նշաններ քննարկի հանդիսավոր արտասանման համար («Արհեստ առողանութեան» արտահայտության համար տե՛ս Ը Այնչան, Սկևռայի վաթ, վանականք եւ սրբարանն, Առանց տեղի եւ տարիքվի, էջ 10. «Ելլու օրինակն է, ի Շարականացն, գոր մեծ վարդապետն Գեորգ ուղղեաց... զի արհեստ առողանութեան խառնելու լիցի ի յերզան»): Մովսես Երզնկացու «Մեկնութիւն ժամագրոց»-ի մեկ տեղիում, որը որոշ չափով մնան է վերոբերյալ՝ Սարկավագի դասընթացներին նվիրված հատվածին, թվարկվում են հոգևորականից պահանջվող հմտությունները հետևյալ կերպ. «Կրթութեան յոժ պետք են գրոց սրոց եւ ներկուտ վերծանութեան, այլեւ արտաքնոց եւ տեղեկութեան գրուցատրութեանցն, եւ քայիցն եւ քառից, եւ ճանաչող միտս ունել, զի կարող լինիցի ընտրութիւն առնել խորթատեսակ քանիցն» (Անդ, էջ 11): Այսպես՝ վերծանությունը առավելապես վերաբերում է Սուրբ գրքին, իսկ «արտաքին» գիտելիքները մատուցվում էին քննարկման («գրուցատրութեան») եղանակով: Սակայն կարելի է ենթադրել, որ այստեղ ևս ուսումնասիրման սկիզբը քարձրածայն լսարանային վերծանությունն էր: Այն անհրաժեշտ էր, ըստ նրկայթից, ոչ միայն բնագիրը ճիշտ ընթերցելու համար. կան տվյալներ, որ գրիչները երբեմն ընդօրինակություններ էին կատարում ոչ թե սկզբնագրին նայելով, այլ թելադրությամբ: Այսպես, Կաֆայի Անտոն անպատակահի վանքում ընդօրինակված ձեռագրի (Երուսաղեմ 1631/ 1429թ.) հիշատակարանը վկայում է. «... ավարտեցաւ ... լուծումը Պէրի արմենիասին, որ է ինաստ մեծի եւ անյաղթ ... Դաւթա, եւ լուծեալ ի մեծ հռետորէ Յոհաննէս Որոտնեցոյ եւ ի Գրիգորէ ... Եւ ... խնդրեալ մեր ... ի բարեւտր վարդապետէն մեր՝ ի տէր Սարգիս քաջ ռաբունոյ, առ ի կարդալ. եւ նա խոնարհեալ յաղաչանս մեր աշխատեցաւ ընդ մեզ եւ կարդացաք՝ երկու ատուրն՝ մին ճառ կարդալով, եւ յայնպէս օր ըստ օրէ զընտլ հոգ ի մտի ունել մի ինչ քան դժուարիմաց ծածուկ եւ անյալա մնացտ, վասն որոյ ի լուսանցքն ի դասն ինացեալս դրոշմեցի...» (Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, մասն առաջին, Երեւան, 1955, էջ 394-95): Նույն գրիչ՝ Ավրասնեց Թաղեոսի մեկ այլ հիշատակարանում («Վեճետիկ, 525/ 1428թ.») ասված է. «... յայսմ ատուր սկիզբն արար մեծ վարդապետս եւ քաջ հռետորս եւ արին տէր Սարգիս դաս տալ եւ ուսուցանել ... մեզ եղբարցս՝ տէր Թորոսին եւ տէր Սիմոնին եւ ինձ՝ յետնեալ փանարոյս Թաղեոսի, որ զԼուծումնքն փոխեցի՝ զամէն ատուր գրասն միայն: Եւ ուշիք եւ հաճեալս կարդացաք զՊրփիլոքն եւ զԱրիստոտելն...» (Անդ, էջ 389-90): Թե՛ն երեկոյթի տարածվածությունը դեռ հայտնի չէ, այնուամենայնիվ կարելի է ստաճել, որ վերծանությունը պետք է որ կարևոր դեր խաղար նաև ապագա գրագիրների՝ թե՛ գրողների, թե՛ թելադրող օգնականների պատրաստման գործում:

¹² Թեոնի աշխատության վերջին հատվածը (այդ թվում նաև ստորև մեքերբովոց երեք գլուխները՝ «Յաղագս վերծանութեան», «Յաղագս լսելութեան», «Յաղագս տարասութեան») պահպանվել է միայն հայերեն, սակայն որոշ արտահայտությունների հունարեն նախագաղափարը կարելի է վերականգնել թավական վատահոլությամբ:

¹³ Թելվնայ Յաղագս ճարտասանական կրթութեան, աշխ. Հ.Մանանդյանի, Երևան, 1938, էջ 178:

պատմել, ստեպ ստեպ զնոսա յիշել հանդերձ յարմարական ենթադրութեանքն՝ ենթադրատութեանքն»):

Վերծանության ունկնդրողը նույնպես պետք է աշխատի *հիշել* ընթերցվող երկը: Ըստ «Յաղագս լսելութեան» հողվածի հրահանգի, դա հարկավոր է անել հետևյալ հերթականությամբ՝. «Արդ՝ զատաջին բառական է զոնեա ենթադրութեան շարագրածին յիշատակ առնել, ապա և զլիտյն և տնօրէնութեան, և յետ այտորիկ փորձել և զգեղեցկապես պատմելոցն յիշատակ առնել...», այսինքն՝ «Լախ բավական է հիշել գոնե շարադրության բովանդակությունը, ապա և զլիտարությունը, և կառուցվածքը, և դրանից հետո միայն փորձել հիշել և պատմելու գեղեցիկ հնարները...: Մեզ հասած մեկնություններում, ինչպես տեսանք, ուսումնասիրվող բնագրի բովանդակության և կառուցվածքի մասին տեղեկություններ են հայտնում հենց «պատմողները»:

Սակայն դա էլ հիշելու համար բավական չէ. «Եւ պարտ է ոչ անդէն վաղվադակի համանգամայն զամենայն ինչ ձեռնարկել յիշել, և ոչ նոյն ժամայն փորձել ասել առ ինքն կամ առ այլ զճանտեցեալն, այլ զրել պարապոյն»³⁶ և յիշատակ բերել ասացելոցն...»: «Պարապ»-ը, ինչպես արդեն պարզվեց, բուն հայկական մեկնողական ավանդության մեջ հասկացվում էր որպես *լուծումը*: Պարզվում է, որ լուծումը հիմնականում դիտվում էր իբրև ճարտասանական վարժություն և նպատակ ուներ ոչ այդքան բացատրելու (թեև դա նույնպես արվում էր), որքան հիշողության մեջ տպավորելու ընթերցվող բնագիրը:

Եվ վերջապես, ճարտասանական հիշողությունը համարվում էր կատարյալ, եթե նկարագրված վարժանքների արդյունքում հոետորական դպրոցի ուսանող ձեռք էր բերում բնագիրն անբողոքությամբ վերարտադրելու ունակություն: Այս դեպքում, սակայն, վերարտադրումը սկզբնապես տարբերվում էր ընթացիկ վերապատմաններից նրանով, որ ոճական փոփոխությունները, որոնք անխուսափելի են ցանկացած վերապատման ժամանակ, այստեղ պետք է կատարվեին *գիտակցաբար*: Այս վարժությունը ըստ Թեոնի կոչվում է «տարասութին» (παρὰ φρασιν) կամ «փոխատրօին» (μετὰ φρασιν)³⁷ և կատարվում է ոճական փոփոխումների չորս հիմնական եղանակներով՝ «ըստ շարադատութեան» (բառերի տեղափոխմամբ), «ըստ առողութեան» (բառերի ավելացմամբ), «ըստ բացահանութեան» (խոսքից՝ որոշ բառերի հեռացմամբ) և «ըստ այլափոխութեան» (սկզբնագրի ոճական նոր երանգավորմամբ՝ հեռանկիչների ներմուծմամբ, քերականական եղանակների փոփոխմամբ ևն): Հիմնական եղանակներից, բնականաբար, կարող են ածանցվել նաև բազմաթիվ խառը տարբերակներ: Վարժությունը կատարելիս նույնպես հարկավոր է շարժվել քայլ առ քայլ՝ հետզհետե «փոշորացնելով» հարասության ժանրային տեսակը:

Որ այս արվեստը որոշ տարածում ուներ ոչ միայն անտիկ հոետորական դպրոցներում, այլ նաև հայերի մեջ 12-րդ դարում, վկայում է Սարգիս Ընդորհալու բարկությունը այն մարդկանց դեմ, որոնցից «Ունն զվաճառութիւն սիրէ՝ և ոճն զայգեգործութիւն, և միա ոճն զկորուսիչ զարծաբասիրութիւն, և ոճն կատակերգութիւն՝ կամ զստախասութիւն և զգատարկաբանութիւն. իսկ այլ ոճն զըրուն և զդատարկութիւն՝ որ է մայր թշուառութեան, և զվնասակար առ ամենայն գործս: Եւ այսպիսիքս՝ ոչ միայն զրկեալ զտանին ի Գորց գիտութենէ, այլ և այլոց ի տյն պարապելոցն՝ դառն դատաւոր և *հաստիքն ընկի, բանից և բառից լինին*, ոչ յօգուտն հայելով՝ այլ զկարգ բանիցն դիտելով: Եթե տազունիցն հանդիպին բանից՝ զերկայն և զբազմարանի ի գովութիւն բանուն. և եթե նախ երկայնագունիցն լինին լսող՝ որ օրինակօքն է *լցեալ, նուազն բարտք վարկանին և զօրատրսն*:

Նմանապէս և յորժամ պարզ բառիցն հանդիպին՝ և զձկնորսացն խօսին, զմորքն՝ և զմանուածոյն և զբազմաբանդակն գովեն: Եւ դարձեալ՝ ընդդէմ նմին զդիւրալորն յարգեն և

³⁶ «Ենթադրութիւն» բառը հունարանություն է՝ ստուգաբանական պատճենում հունական *եթոթես* բառի, որը սովյալ դեպքում նշանակում է «բովանդակություն»:

³⁷ Նույնպես հունարանություն, պատճենում է *եթոթրես* «տիրասանություն, երեսպաշտություն» բառը:

³⁸ Անդ, էջ 179:

³⁹ «Գրել պարապոյն» արտահայտությունը կարելի է վերականգնել որպես *σχολιογραφειν*, այսինքն՝ սեղմագրել դասախոսության պես՝ մտքերի պահպանմամբ, քայց սեփական ոճով (տես *Lampe G.W.H. A Patristic Greek Lexicon with addenda et corrigenda*, Oxford, 1972, s.v. *σχολιογραφειν*):

⁴⁰ Անդ, էջ 181 («Յաղագս տարասութեան»):

⁴¹ Չկա և ոչ մի անհրաժեշտություն «մորք» բառի այս կիրառության դեպքում փնտրել որևէ հունական նախազադափար (հմտ. *Մ.-Է. Երբնյան*, «Արտաքին» և «Մորք» գրեանք, «Աշտանակ. Հայագիտական պարբերագիրք», հատ. Ա, Երևան, 1998, էջ 29): Ոճը բնութագրող «մորք» մակդիրն այնքան բնական է իր սեփական իմաստով և պատկերով, որ նույն հաջողությամբ կարող էր զարգանալ հայերենում ինքնուրույնաբար: Եվ նույնիսկ այնտեղ, որտեղ նա իրոք հայտնվում է թարգմանության արդյունքում, պարտադիր չէ, որ նա համապատասխանի ավեքսանդրյան *λεπτός* մակդրիին. այդպես, օրինակ, նույն Թեոնի մոտ (էջ 20-21) «մորք և պայծառ և շնորհատր պատմութիւն» *Ἰσχυρός καὶ γλαφυρός διήγημα* արտահայտության թարգմանությունն է:

*մեծարեն»*⁴²: Եթե մի կողմ դնենք այստեղ հնչող պարսավանքը, ապա «քննիչ բանից եւ բառից» իրականում կատարում է սովորական ճարտասանական վարժություն՝ ճիշտ այնպես, ինչպես այն նկարագրել է Թեոնը:

Հարասական աշխատանքի մնուշն առկա է նաև փիլոնյան երկերի հայերեն մեկնություններում: «Հավաքումն յայտնաբանութեան ի Փիլոնն իմաստնոյ՝ որ Յաղագս նախախնամութեան արաջին բանն» յերկասիրութեանց Յովհաննու Ռոտունեցոյ լուպատր րարունապետի տեառն իմոյ» գործը⁴³ ներկայացնում է «Յաղագս Նախախնամութեան» բովանդակությունը «գիրալուր բանի» և մեծ կրճատումներով: Մեկնության խորագիրը հուշում է, որ այն կազմվել է Հովհան Ռոտունեցու աշակերտներից մեկը⁴⁴, ուսուցչի՝ փիլոնյան բնագրի պարզաբանումների հիման վրա: Քանի որ Ռոտունեցու բացատրությունները սկզբնական, այսինքն՝ լուծմունքի ձևով չեն պահպանվել, հնարավոր չէ որոշել մշակողի կատարած փոփոխությունների եղանակն ու ծավալը: Այնուամենայնիվ հանդիսավոր ոճը (հատկապես առաջին և երկրորդ գրքերի հարասությունների ներածական մասերում), պարզ համաչափ կառուցվածքը և սեղմ շարադրանքը ցույց են տալիս, որ հավաքողը ձգտում էր վերածել ուսումնասիրված նյութը ինքնուրույն կազմած նոր ճառի: Դա, թերևս, այն «համար առնելու» ձևն է, որի մասին հիշատակում է Հովհաննես Մարկավագի կենսագիրը. երկի ընթերցման ավարտին ուսանողը, թերևս օգտվելով գրառումներից, ապացուցում էր, որ պատրաստ է մեկ շնչով արտասանելու այն, ինչ յուրացվում էր շաբաթների և ամիսների ընթացքում: Դա կատարելության աստիճանն էր. ընթերցողը նույնանում է ընթերցվող հեղինակի հետ՝ ժառանգելով նրանից այն ստեղծագործական կարողությունը, որից նախկինում առաջացել է ուսումնասիրված երկը:

Չարանանայի չէ, որ անտիկ ճարտասանական իրահանգները պահպանում էին իրենց կարևորությունը նաև միջնադարի համար: Դեռ մնում էին հասարակական ոլորտներ, որտեղ խոսքի վարպետություն անհրաժեշտ էր և զնահատվում էր՝ եկեղեցական բեմբասացություն, նամակագրություն (հատկապես պաշտոնական) և դասասացություն հոգևոր դպրոցներում: Այստեղ նույնպես ճարտասանից պահանջվում էր բովանդակության իմացություն, մշակված լեզու եւ արտաբերման հմտություն, առաջին հերթին՝ վարժված հիշողություն: Բնականաբար, ուսուցման ընթացքում խոսքի մշակման այս երեք տարրերը չէին կարող իրարից զատվել. ապագա վարդապետի ելույթների առարկան՝ թե՛ եկեղեցական, թե՛ դպրոցական ամբիոնից աստվածաբանությունն էր, ուստի նա պետք է ձեռք բերեր աստվածաբանական և դրա հետ կապված փիլիսոփայական գիտելիքներ: «Չեղք բերել» մշակվում է հասկանալ և հիշողության մեջ պահել. դրա լավագույն միջոցը հայտնի էր. հարկավոր էր դիմել քերականական-ճարտասանական հնարներին: Օղակը փակվում է. վարդապետ-ճառասանը իր վարդապետության բովանդակությունը առնում է եկեղեցու կողմից ճանաչված հեղինակների երկերից, սակայն այս հեղինակների ընթերցման և ուսումնասիրման ընթացքը սկզբից ի վեր ճարտասանական վարժանքի բնույթ է ունենում: Փիլիսոփայությունը և աստվածաբանությունը հանդես էին գալիս առավելապես իբրև ճարտասանական առարկաներ, իսկ աստվածախոս փիլիսոփան գիտակցվում էր իբրև *հոնտոր*:

Այսպես՝ Թովմա Մեծոփեցու մասին նրա աշակերտ Կիրակոսը գրում է. «Ուսեալ էր զերկոտասան մասունք իմաստութեան ... եւ զաննայն իմաստս *հոնտորական հանճարոյ արտաքին փիլիսոփայութեան*»⁴⁵: Ներսես Շնորհալիյն իր պապին՝ Գրիգոր Մագիստրոսին, նվիրված չափածո ներբողում փիլիսոփա Պլատոնին հիշատակում է ոչ այլ բանի, եթե ոչ նրա ճարտասանական հմտության համար. «Ըստ Հոնների տաղաչափեալ (*Ըստ Պղատոնի*

⁴² Մեկնութիւն եօթանց բրօքց Կաթողիկեայց, Արարեալ երանելոյ **Մարգիս Շնորհալից Վարդապետի**՝ հայոց իմաստասիրի և քաջ հոնտորի, Կոստանդնուպոլիս, 1828, էջ 11:

⁴³ Սույն գործը պարունակում է և «Յաղագս նախախնամութեան» տրամախոսության երկրորդ գրքի հարասություն. «Նորին քան երկրորդ յաղագս նախախնամութեան»: Հավաքումն քննական քննազոր շուտով իրապարակվելու է մեր թեկնածուական թեզի հավելվածում:

⁴⁴ «Յաղագս նախախնամութեան» երկի մեկնություններից «Հավաքումն» ամենաուշն է: Դրան մախորդում են Մխիթար Գոշի պատճառը և, հավանաբար, լուծմունքը (մեր ենթադրությամբ, Գոշին է պատկանում ՄՄ թիվ 1672 ձեռագրում պարունակվող A3 լուծմունքը), դրան են հաջորդում Վանական վարդապետի դպրոցում ստեղծված «Առաջաբանութիւն Փիլոնի» երկու տարբերակներ: A1 լուծմունքի հնագույն օրինակը պահպանվում է ՄՄ թիվ 437 մատյանի Եսայի Նչեցու ձեռքով կատարված մասում (1283/4թ.): Նույն տեղում գտնվում է A2 լուծմունքի ամենավաղ պատարիկը:

⁴⁵ Հավանաբար Գրիգոր Տաթևացու կողմից: Այն հաստատվում է ոչ միայն նրանով, որ Գրիգորը՝ Ռոտունեցու դասախոսությունների հիմնական զրագրողն է եղել (տե՛ս **Ս. Մ. Արեշտյան, Философские взгляды Григора Татеваци, Ереван, 1957, сс. 28 – 29**), այլև նրանով, որ Տաթևացու «Հարցմանց գրքի» «Ընդդէմ նոգա որ գիարկ և զբախտն ասեն» գլխում մեջբերումներ են հայտնաբերվել Ռոտունեցու «Հավաքումից» (**Գրիգոր Տաթևացի**, Գիրք հարցմանց, Երուսաղէմ, 1993, էջ 12-13):

⁴⁶ **Յ. Տաշեան**, Մայր Յուզակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, Վիեննա, 1895, էջ 417-8:

պերճաբանալ) Յունարեմին ներհուն եղեալ, յոքն իմաստիցն մակացեալ»⁹⁷: Հետաքրքիր է, որ արդեն Ներսէս Շնորհալու վարքի հեղինակը նշում է, որ Մագիստրոսը «յոյժ իմաստուն եւ հանճարեղ, եւ ներքին եւ արտաքին ուսմամբ ներակրթեալ վարժմամբ ի մանկական տիոց հայկական եւ հունական դպրութեամբ, մինչեւ հասեալ ի հռետորական աստիճան փիլիսոփայութեան»: «Քաջ հռետոր» սովորական մակդիր է աստվածաբանություն և փիլիսոփայություն դասավանդող ականավոր վարդապետների համար:

Ճարտասանական դասընթացների արդյունքում ուսումնասիրվող բնագիրը համարյա թե անգիր էր արվում: Դրա հետևանքներից մեկն այն էր, որ վերլուծողը և ունկնդրողը երբեմն կարող էին սերտվող հեղինակի ազդեցությունը կրել նաև սեփական ստեղծագործության, մինչև իսկ սեփական ոճի վրա: Ուստի գաղափարների տարածումն ուսումնասիրելու համար նշարվում է բավականին արդյունավետ և հետաքրքիր ուղի. հարկավոր է դիտել համապատասխան գաղափարների աղբյուր հանդիսացող հին հեղինակի ճակատագիրը կրթական ընթացքում, հատկապես պարզել, թե որ դպրոցներում էին կատարվում համապատասխան ընթերցումներ: Մյուս կողմից՝ վարդապետների ստեղծագործության մեջ առաջին հերթին հարկավոր է փնտրել այն հեղինակների ազդեցությունը, որոնց ընթերցումներին նրանք մասնակցում էին ուսումնական տարիներին, և հատկապես՝ որոնց ընթերցումները իրենք էին վարել: Այս տեսակետից մեծ կարևորություն է ստանում դպրոցական գրառումների՝ պատճառների, լուծումների, բառաքերի և ն տեղաբաշխումը ըստ հոգևոր կենտրոնների:

Փիլիսոփայական բնագրերի քերականական-ճարտասանական մշակման ընթացքն⁹⁸ անհրաժեշտ է նկատի առնել նաև մեկնողական ժանրերի աղբյուրագիտական գնահատման և դասակարգման համար: Այսպես, լուծումների նյութը մեծ հետաքրքրություն է ներկայացնում լեզվաբանության և մշակույթի պատմության համար, քանի որ ցույց է տալիս, թե ինչպես է զարգանում մտավոր միջավայրը և ձևավորվում «դպրոցական» լեզուն՝ հոգևոր-փիլիսոփայական սոցիոլոգիայով⁹⁹. մի կողմից՝ հին հեղինակների ոճի՝ արտաբերման համար դյուրացմամբ և հարմարեցմամբ, մյուս կողմից էլ՝ նույն ոճի նմանակմամբ¹⁰⁰ և մասնագիտական եզրերի յուրացմամբ¹⁰¹:

Հռետորական դասարանում վերլուծական աշխատանքի ընթացքում հետզհետե զարգանում էր նաև անհատական դատողական կարողությունը, մտավոր բովանդակությունը վրա ուշադրությունը սևեռելու ունակությունը և այլ նման հոգևոր և մտավոր հատկություններ, և դա թերևս եռաչավիղ կրթության նպատակներից և արդյունքներից կարևորագույն էր: Հետևաբար, լուծումներում կարելի է նյութ փնտրել նաև պատմական հոգեբանության և մանկավարժության պատմության համար:

Որոշ վերապահումով լուծումների նյութն օգտագործելի է նաև մեկնվող բնագրի տեքստաբանական ճշտումների և սրբագրումների համար:

Սակայն լուծումների վերապատմողական բնույթը խիստ սահմանափակում է դրա պատմափիլիսոփայական արժեքը, քանի որ ընթերցանությունները նպատակաուղղված չէին փիլիսոփայական հասկացությունների և մտավոր համակարգերի վերլուծությանը, թեև հատուկեմտ դատողություններ դրա մասին կարող են պատահել և այստեղ: Այս

⁹⁷ Տեսուն **Ներսէս Շնորհալու** Հայոց Կաթողիկոսի բանք չափաւ, Վենետիկ, 1928, էջ 588:

⁹⁸ Սովինը Հայկականը, ԺԴ, Վենետիկ, 1854, էջ 13:

⁹⁹ Հարկավոր է շեշտել, որ եռաչավիղ և քառաչավիղ առարկաների ավանդական դասակարգումն իրականում վերաբերում է միայն կրթական ձեռնարկներին: Կենդանի վերլուծական դասընթացների ժամանակ ուսումնասիրվող բնագրերը պարզաբանվում և յուրացվում էին քերականական, ճարտասանական և այլ հնարների միջոցով, որոնք գործածվում էին ցանկացած նյութի վրա:

¹⁰⁰ Չարմանայիորեն այս լեզվի ձևավորման ընթացքի երկու կողմն էլ ստացել են երկու գուգաչափ վկայություն. Կապուսի վանքի դպրապետ Հովհաննես Համչենցու մասին հայտնվում է, որ նա «...գիրքածածուկ բանն մատենի յայտնէ մանկանց Սիովհի»: (Կ[արապետ] եպիսկոպոս, Մահմեդական լուծը եւ նրա բովանդակն ներքոյ ծարկող հայ վարդապետարանների, «Արարատ», 1913, էջ 595), իսկ ուն Տիրատուր վարդապետը (խոսքը թերևս գլաճորյան վարդապետի՝ Հովհան Ռոտունցու ուսուցչի մասին է) «...արար ... զգիրս քարոզից ի պէտս վարդապետաց եղեկեցոյ յըթնածածուկ փիլիսոփայական ոճով: Բանգի երանելի վարդապետն Եգեայն ի շնորհաց հոգւոյն սրբոյ գետօրեն թղէտը գրանա խրատականս առ ի յովացումն աշակերտելոց»: (Գիրք Աստուածաբանական որ կոչի Դրախտ ցանկալի, շարագրեալ, Ղազարոս Աստուածաբան վարդապետ **Ճակեղեղ** ի փառս սրբոյն Էջմիածնի, Կոստանդնուպոլսի, [1735], էջ. 639):

¹⁰¹ Հայ միջնադարյան հեղինակների կողմից հունաբան բնագրերի ոճի նմանակման երևույթը հանգամանալիորեն լուսաբանված է Գ. Մուրադյանի «Պիտոյից գրքի» ոչ թարգմանական մասերի լեզուն և հայ հեղինակների հունաբանությունները՝ հոտվածում (տե՛ս «Աշտանակ. Հայագիտական պարբերագիրք», հատ. Գ, Երևան, 2000, էջ 99-122):

¹⁰² Կարելի է ենթադրել, որ մասնագիտական լեզուն զարգանում էր առավելապես հեղինակավոր կիրառության շնորհիվ՝ այս կամ այն եզրը կամ արտահայտությունը ճանաչում էր ստանում, քանի որ գործածման մեջ էր դրվում ողև երևելի վարդապետի կողմից:

